ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա. Այվազյանի (լիազորագիր՝ տրված 16.12.2020թ.),

ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչներ

Ս. Մուշեղյանի (լիազորագիր՝ տրված 16.12.2020թ.),

Դ.Գրիգորյանի (լիազորագիր՝ տրված 16.12.2020թ.),

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 18.12.2020թ.),

քննելով ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված (14.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.12.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Վարչապետի աշխատակազմը կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման նպատակով ս.թ. նոյեմբերի 25-ին կազմակերպել է ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4 ծածկագրով գնանշման հարցման մրցույթ: Ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն: Մրցույթին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պելեկա» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է, որ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրառման կարգը և դրանց առանձնահատկությունները: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4- ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մրցույթի հրավերի մաս 1-ի 5-րդ «Հայտի գնային առաջարկը» բաժին 5.1 կետով պահանջ է սահմանված, որ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ Հեռ.՝ +37460771111 www.mts.am, info@mts.am Մրցույթի հրավերի 8-րդ «Հայտերի բացումը, գնահատումը եվ արդյունքների ամփոփումը» բաժին 8.2 կետը սահմանում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի

պահանջներին անհամապատասխան: Մրցույթի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի համաձայն՝ «Ծառայություն մատուցողը պետք է ունենա գործող կնքված պայմանագրեր ՀՀ գործող բջջային կապի օպերատորների հետ»: ՀՀ-ում գործող մեկ բջջային կապի օպերատոր էլ հանդիսանում է մեր կազմակերպությունը, որը և տրամադրում է նշված ծառայությունը VAS օպերատոր հանդիսացող ընկերություններին, իսկ տվյալ դեպքում «Պելեկա» ՍՊԸ-ի ներկայացրած գնառաջարկը չի համապատասխանում վերը նշված կետերին: Մասնավորապես, ինչպես հստակ երևում է մրցութային փաստաթղթերից, «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից կատարված գնային առաջարկը ոչ միայն ակնհայտորեն ցածր է պահանջվող ծառայությունների շուկայական արժեքից, այլև անհամեմատ ցածր է դրանց ինքնարժեքից և չի կարող բավարարել Օրենքով և մրցութային փաստաթղթերով սահմանված ծախսերը ներառելու պահանջներին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 7-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 07.12.2020թ-ի թիվ 3 արձանագրության 3.1-րդ կետերով կայացրած որոշումը և մրցույթի հաղթող ճանաչել «ՄՏՍՀայաստան» ՓԲԸ-ին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված բողոքը:

<u>2. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ վարչապետի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.12.2020թ. թիվ /18.5/53154-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր ս.թ. դեկտեմբերի 15-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/18599-2020 գրությամբ ներկայացված բողոքի վերաբերյալ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցել են նաև «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն և «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.12.2020թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Նույն արձանագրության 4.1 կետով արձանագրվել է, որ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գինը կազմել է 1 950 000 ՀՀ դրամ, իսկ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գինը՝ 7.8 ՀՀ դրամ (6,5 ՀՀ դրամ (արժեք) + 1,3 ՀՀ դրամ (ԱԱՀ)):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Հանձնաժողովի 07.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ միաժամանակյա բանակցությունների են ներկայացել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն և «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում գների նվազեցում չի արձանագրվել: Նույն արձանագրության 3.1 կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ին, իսկ 3.2 կետով՝ մասնակցի հետ կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Նույն կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը, ինչպես նաև հայտով ներկայացված գնային առաջարկը ամբողջովին համապատասխանել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, այսինքն, Ընկերությունը հայտարարել և հավաստել է, որ հանդիսանում է VAS օպերատոր և ունի գործող կնքված պայմանագրեր բջջային կապի օպերատորների հետ, գնային առաջարկը ներկայացվել է մեկ թվով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Ինչ վերաբերում է Բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Ընկերության գնային առաջարկը ակնհայտորեն ցածր է պահանջվող ծառայությունների շուկայական արժեքից, ուստիև ենթակա է մերժման, ապա հայտնում ենք, որ թեև Ընկերության գնային առաջարկը իսկապես էականորեն ցածր է Ընթացակարգի այլ մասնակիցների գնային առաջարկներից, սակայն տվյալ դեպքում Հանձնաժողովը իրավասու չէր Ընկերությունից պահանջելու արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ, ուստիև մասնակցի գնային առաջարկը ձեռքբերվող ծառայությունների շուկայական ինքնարժեքից ցածր լինելու հիմնավորմամբ Ընկերության հայտը մերժելու՝ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր Հանձնաժողովը չուներ: Հետևաբար, Հանձնաժողովը «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայամանագրեր կնքելու որոշում կայացնելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.12.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 բողոքը, որով «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն վիճարկել է «Պելեկա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, թե իբր՝ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից կատարված գնային առաջարկը ոչ միայն ակնհայտորեն ցածր է պահանջվող ծառայությունների շուկայական արժեքից, այլև անհամեմատ ցածր է դրանց ինքնարժեքից և չի կարող բավարարել Օրենքով և մրցույթային փաստաթղթերով սահմանված ծախսերը ներառելու պահանջներին:

Նշված բողոքով տեղի է ունեցել քննության թվով մեկ նիստ:

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից՝ որպես սույն բողոքի շրջանակներում 3-րդ անձ ներգրավելու համար 21.12.2020թ. ներկայացվել է միջնորդություն, որով մասնավորապես խնդրել է «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին ներգրավել որպես երրորդ անձ՝ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 ծածկագրով բողոքի շրջանակներում, ինչպես նաև ընձեռնել հնարավորություն ծանոթանալու բողոքին կից ներկայացված նյութերին, և տրամադրել բոլոր այն փաստաթղթերը, որոնք կներկայացնեն սույն բողոքի կողմերը, որպեսզի «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն հնարավորություն ունենա պաշտպանելու իր օրինական շահերը և ներկայացնելու դիրքորոշում «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Նման պայմաններում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն ստորև ներկայացնում է «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի 11.12.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 ծածկագրով բողոքի վերաբերյալ հետևյալ նկատառումներ.

ա) Այսպիսով, ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար՝ կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարվել է ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Պելեկա» ՍՊԸ–ն, «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն:

Մասնավորապես, «Պելեկա» ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ 6,5 /առանց ԱԱՀ/, այսինքն՝ 7,8 ընդհանուր գումար /ներառյալ ԱԱՀ/:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Պելեկա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար, որի արդյունքում «Պելեկա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է կնքել պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է

արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, փաստում ենք, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Մինչդեռ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է վերոնշյալ իրավական նորմերի և Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ անհիմն է «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի այն պնդումը, որ «Պելեկա» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման՝ առաջարկվող ծառայությունների շուկայական արժեքից ակնհայտորեն ցածր գին առաջարկելու հիմքով, քանի որ մասնակցի հայտը մերժելու նման հիմք գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում:

բ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև մի շատ կարևոր հանգամանք. ակնհայտ է, որ «Պելեկա» ՍՊԸ-ն տեխնիկական վրիպակի արդյունքում նախատեսվածից ցածր գին առաջարկելու արդյունքում չի կարող հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից կամ պայմանագիր կնքելուց, քանի որ հակառակ դեպքում վերջինս կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում: Նման պայմաններում պարզ է դառնում, որ ընտրվել է այլ տարբերակ նման գնով պայմանագիրը չկատարելը: Մասնավորապես, ենթադրաբար համատեղ որոշման արդյունքում, Ընթացակարգով երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն բողոք է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Պելեկա» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշումների դեմ: Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պելեկա» ՍՊԸ–ն և «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում են գործընկերներ /հաշիվ-ապրանքագիրը կցվում է/, որից էլ պարզ է դառնում, որ այս պարագայում մեր կարծիքով փորձ է կատարվում «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ամեն գնով իր գործընկերոջը փրկել ստեղծված իրավիճակից, այն է՝ «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից սխալ ներկայացված գնային առաջարկը մեկնաբանելով այնպես, թե իբր «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից շուկայական արժեքից և ինքնարժեքից ցածր գնային առաջարկ է ներկայացրել, որի պայմաններում հայտը ենթակա է մերժման:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում ենք հաշվի առնել վերոհիշյալ փաստը և չենթարկվել նման մանիպուլյացիաների:

գ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նախկինում քննված տարբեր մասնակիցների գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի քննության ընթացքում, երբ մասնակիցը ստիպված հրաժարվել է իր գնային առաջարկից՝ այն հիմքով, որ ընդնահուր գնի փոխարեն ներկայացվել է միավորի գին, բողոքներ քննող անձանց կայացրած որոշումներով երբեք չի արձանագրվել, որ նման հայտը ենթակա է մերժման, որի պայմաններում արդեն կբացառվեր տվյալ մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու հնարավորությունը:

Ուստի գտնում ենք, որ եթե նման հիմքով բավարարվի «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը, ապա վերոհիշյալ որոշումը ահռելի դաշտ կստեղծի մասնակիցներին հետագա ընթացակարգերի շրջանակներում տարբեր դրդապատճառներով, այդ թվում նաև կոռուպցիոն, գնային առաջարկ ներկայացնելիս՝ նախադեպային որոշման հիման վրա պահանջել իրենց գնային առաջարկի մերժումը, եթե այն ակնհայտ ցածր է ինքնարժեքից:

գ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ եթե «Պելեկա» ՍՊԸ-ն նշված գնով կատարի վերոհիշյալ պայմանագիրը, ինչպես համաձայնվել է, ապա ՀՀ պետական բյուջեն կունենա լուրջ խնայողություն, ինչը էական նշանակություն ունի ներկայիս տնտեսական ծանր պայմաններում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/101 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն, «ՊԵԼԵԿԱ» և «Նիկիտա Մոբայլ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության 2.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են եղել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Նույն արձանագրության 4.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Անվանումը	«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ		«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ		«ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ	
		Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար	Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար	Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություններ	1 625 000	1 950 000	2 000 000	2 400 000	6.5	7.8

4. Նույն արձանագրության 5.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի

5-րդ ենթակետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2020թ. նիստի թիվ 03 արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ միաժամանակյա բանակցությունների ներկայացել են «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն և «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում չի արձանագրվել գների նվազեցում:

6. Նույն արձանագրության 2.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

	Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը
1	1	«ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ
	2	«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ
	3	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ

7. Նույն արձանագրության 3.1 ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի 11.12.2020թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի 18.12.2020թ. թիվ /18.5/53154-2020 գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի 22.12.2020թ. դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) **բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, (...):**

ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: ***<u>Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:</u>*** Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն

տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում **բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես, ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն, «ՊԵԼԵԿԱ» և «Նիկիտա Մոբայլ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության 2.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են եղել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 4.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Անվանումը	«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ		«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ		«ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ	
		Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար	Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար	Գումարը առանց ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություններ	1 625 000	1 950 000	2 000 000	2 400 000	6.5	7.8

Նույն արձանագրության 5.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2020թ. նիստի թիվ 03 արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ միաժամանակյա բանակցությունների ներկայացել են «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն և «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում չի արձանագրվել գների նվազեցում:

Նույն արձանագրության 2.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

	Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը
1	1	«ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ
	2	«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ
	3	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ

Նույն արձանագրության 3.1 ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: ***<u>Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:</u>***

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ին՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչելն իրավաչափ է և չի հակասում վերը շարադրված իրավական նորմերով սահմանված պահանջներին:

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում արձանագրել, որ «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և արդյունքում ընտրված մասնակից ճանաչված, ունենալով հնարավորություն օգտվել Օրենքով իրեն վերապահված բողոք ներկայացնելու իրավունքից, «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բողոք չի ներկայացրել:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 11.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**